ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+374 10) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

01.08.2022թ.

N 08-198

<<Գլոբալ Մեդիքլ Թրեյդինգ>> ՍՊԸ տնօրեն
պարոն Կ. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան,

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Գլոբալ Մեդիքլ Թրեյդինգ>> ՍՊԸ-ի միջև 03.05.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-14 ծածկագրով պայմանագիրը, ինչպես նաև 11.04.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-15 ծածկագրով պայմանագիրը և դրա շրջանակներում 10.05.2022 թվականին թիվ 1 համաձայնագիրը: Այնուհետև 11,05,2022թ. Ձեզ ներկայացվել է պատվեր վերը նշված պայմանագրերից: Ձեր 01.06.2022թ. ներկայացրած գրության համաձայն, ապրանքների անհրաժեշտությունը հաշվի առնելով, Պատվիրատուն տրամադրել է Ձեզ ապրանքների մատակարարման լրացուցիչ ժամկետ, այն սահմանելով մինչև 15.07.2022թ. ներառյալ, ընդ որում Պատվիրատուն հայտնել է նաև, որ Պայմանագրերի 7-րդ կետով նախատեսված դրույթը կիրառելի չէ տվյալ դեպքի համար:

10.07.2022թ. կրկին դիմել եք Պատվիրատուին, հայտնելով, որ պայմանագրի կատարումը անհնար է դարձել և խնդրել եք լուծել Պայմանագրերը, հաշվի առնելով Պայմանագրերի 7-րդ կետով սահմանված պայմանները, ինչին Պատվիրատուն կրկին պատասխանել է, որ Պայմանագրերի 7-րդ կետով նախատեսված դրույթը կիրառելի չէ տվյալ դեպքի համար և տրամադրված ողջամիտ ժամկետի ավարտին ապրանք մատակարարված չլինելու դեպքում Պայմանագրերը ամբողջությամբ միակողմանի կլուծվեն Պատվիրատուի կողմից: Այնուամենայնիվ, Պատվիրատուն դեռ 29,07,2022թ. դրությամբ Պայմանագրերը չէր լուծել, Ձեզ տալով ևս հնարավորություն ապահովել ապրանքների մատակարարումը, սակայն ապրանքները այդպես էլ չեն մատակարարվել:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը և հիմք ընդունելով ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-14 և ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-15 գնման պայմանագրերի 2,1,7 կետերը պատվիրատուն միակողմանիորեն և ամբողջությամբ լուծում է պայմանագրերը:

ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն Ձեր ընկերությունից կգանձվեն պայմանագրերի և որակավորման ապահովումները պայմանագրերին համապատասխան (հաշվարկը ներկայացվում է ստորև):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Պայմանագրի համարը	Փաստաթղթի անվանումը	Փաստաթղթի ձևը	Վճարման ենթակա գումարը (թվերով և տառերով)
ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-14	Որակավորման ապահովում	Տուժանքի մասին համաձայնություն և վճարման պահանջագիր	238 500
ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-14	Պայմանագրի ապահովում	Տուժանքի մասին համաձայնություն և վճարման պահանջագիր	159 000
ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-15	Որակավորման ապահովում	Տուժանքի մասին համաձայնություն և վճարման պահանջագիր	60 750
ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40-15	Պայմանագրի ապահովում	Տուժանքի մասին համաձայնություն և վճարման պահանջագիր	40 500
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ			498 750

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Հ. ԱՎՇԱՐՅԱՆ

Կատարող՝
գնումների բաժին
հեռ. 010-650560